# Շաբաթական ակնարկ 16.06.25

Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծություն՛ը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն:** Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում,** որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում:**

«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:

Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **զուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, հետևաբար **բախվում են ներդրումային ռիսկերի հետ**, ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը:** Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

# Շուկաները նախորդ շաբաթ՝ ամփոփ

Նախորդ շաբաթ ԱՄՆ բոլոր հիմնական բաժնետոմսային ինդեքսները արձանագրեցին բացասական եկամտաբերություն:




Ոսկու գինը հասավ նոր ռեկորդային առավելագուն մակարդակի:

ԱՄՆ աշխատաշուկան շարունակում է թուլանալ, թեև աստիճանական տեմպերով:

Իսրայել-Իրան հակամարտության ֆոնին նավթի գները շաբաթական կտրվածքով աճել են մոտ 13%-ով:

Նախորդ շաբաթվա ընթացքում S&P 500-ը նվազեց 0.36 %-ով




Նախորդ շաբաթվա ընթացքում Nasdaq-ը նվազեց 0.56 %-ով



## Նախորդ շաբաթվա ընթացքում Dow Jones-ը նվազեց 1.30 %-ով

## Նախորդ շաբաթվա ընթացքում Russell 2000-ը նվազեց 1.42 %-ով

# Ինդեքսներ

Հիմնական բաժնետոմսային ինդեքսների դինամիկան նախորդ շաբաթ

- Նախորդ շաբաթ ԱՄՆ բոլոր հիմնական ինդեքսները արձանագրեցին բացասական եկամտաբերություն, որը գլխավորեց փոքր կապիտալիզացիա ունեցող ընկերությունների ինդեքսը:
- S&P 500-ը վերադարձավ 6000-ից ցածր մակարդակի:



# Բաժնետոմսերի շուկա | MAG7 | Տատանողականություն

VIX-ը, որը չափում է S&P 500 ինդեքսների կարճաժամկետ տատանողականությունը կրկին բարձրացավ 20-ից բարձր մակարդակի, իսկ VVIX-ը հատեց 100-ի սահմանը, ինչ պատմականորեն խոսում է շուկայում արագ փոփոխվող տրամադրությունների մասին:

Խոշոր տեխնոլոգիական ընկերություններում մանրածախ ներդրողների կողմից գնումները դանդաղում են: Magnificent 7-ի բաժնետոմսերում մանրածախ գնումների 10-օրյա սահող միջինը, նվազել է մոտ 12%-ով, ինչը ամենացածրն է 2022 թվականի արջերի շուկայի սկզբից ի վեր: Համեմատության համար նշենք, որ 2023 թվականի հունվարին գրանցվել է բոլոր ժամանակների ամենաբարձր՝ 42% ցուցանիշը:

# Բաժնետոմսերի շուկա| 1-ին եռամսյակի հաշվետվություններ

Adobe-ն (ADBE) երկրորդ եռամսյակում հայտնեց մեկ բաժնետոմսի դիմաց 5.06 դոլարի շահույթի մասին, որը տարեկան կտրվածքով աճել է 12.9%-ով և 2.02%-ով գերազանցեց սպասումները: Հասույթը տարեկան կտրվածքով աճել է 11%-ով՝ հասնելով 5.87 միլիարդ դոլարի, ինչը պայմանավորված է մեդիայի բաժանորդագրությունների և Experience Cloud ծառայությունների աճով: Ընկերությունը հաստատեց 2025 թվականի ֆինանսական ուղեցույցը, սակայն ընկերության բաժնետոմսերը նվազեցին՝ արհեստական բանականության դանդաղ զարգացման վերաբերյալ մտավախությունների պատճառով:

Oracle Corporation-ը (ORCL) գերազանցեց ակնկալվող EPS-ի և հասույթի սպասումները: Ընկերությունը հասույթը տարեկան կտրվածքով աճել է 11%-ով, ամպային ծառայություններից ստացված հասույթը աճել է 27%-ով՝ հասնելով 6.7 միլիարդ դոլարի: Oracle-ի ենթակառուցվածքային բիզնեսը՝ OCI-ն, բացառիկ պահանջարկ ունի, և այս տարի կանխատեսվում եկամուտների աճ ավելի քան 70%-ով: Արդյունքում ընկերության բաժնետոմսերի գինը նախորդ շաբաթ բարձրացավ ավելի քան 23%-ով:

# Պարտատոմսերի շուկա

- Նախորդ շաբաթ ԱՄՆ պարտատոմսերի շուկան արձանագրեց բացասական եկամտաբերություն (գները բարձրացան), որը գլխավորում էին միջնաժամկետ պարտատոմսերը (5YR 7YR):
- Սակայն պարտատոմսերի հանդեպ պահանջարկը որոշակի չափով նվազեց Հորմուզի նեղուցում Իրանի կողմից ձեռնարկված պատասխան գործողությունների և նավթի գների կտրուկ աճի պատճառով, քանի որ նավթի գների աճը մեծացրեց գնաճի հետ կապված մտավախությունները:

# Պարտատոմսերի շուկա | դոլարի ինդեքս | տոկոսադրույքի ակնկալվող նվազեցում

Տոկոսադրույքի իջեցման սպասումները նվազեցին՝ ստագֆլյացիայի մտավախություններ ֆոնին: Նշենք, որ բարձր էներգակիրների գները սովորաբար խթանում են ինֆլյացիան: Այս պայմաններում ԴՊՀ-ի կողմից տոկոսադրույքների իջեցման սպասումները նվազեցին:

ԱՄՆ դոլարը շարունակեց նվազել՝ հասնելով 2023 թվականի հուլիսից ի վեր շաբաթական փակման ամենացածր մակարդակին:



Ուրբաթ օրը Իսրայել–Իրան հրթիռակոծության ազդեցությունով պայմանավորված WTI տեսակի նավթի գին աճեց ավելի քան 8%-ով, որը ամենամեծ օրական աճն էր 2022 թվականի մարտից ի վեր, (պայմանավորված էր ռուս-ուկրաինական պատերազմով):




Ուրբաթ օրվա ընթացքում ոսկու գինը հասավ նոր ռեկորդային առավելագուն, բայց օրը փակեցին նախկին ռեկորդային բարձր փակման գինց փոքր ինչ ցածր մակարդակներում:

# Կրիպտոարժույթներ

- Նախորդ շաբաթ բոլոր հիմնական կրիպտոարժույթները ներառյալ XRP-ը, ETH-ը և BTC-ը արձանագրեցին բացասական եկամտաբերություն:
- Ինչպես նախկինում Բիթքոյնը շարունակում է նվազել շուկայում բարձր անկայունության ֆոնին, սակայն ամեն անգամ այդ անկումը կարծես դառնում է չափավոր: Մի՞ գուցե ինչպես կարծում են որոշ վերլուծաբաններ կգա մի օր երբ Բիտքոինը կկարողանա փոխարինել ոսկուն և կարձանագրի դրական եկամտաբերություն բարձր անկայունության պայմաններում:

# Հետաքրքիր փաստեր

- Իսրայել–Իրան հակատարտությունը արդեն իսկ ազդել է նավթի գների վրա, ուրբաթ օրը WTI տեսակի նավթի գինը հասցրեց բարձրանալ մինչև 13%-ով:
- JPMorgan Chase-ի վերլուծաբանները կարծում են, որ նավթի գինը կարող է բարձրանալ մինչև 110-130 դոլար մեկ բարելի դիմաց, եթե Իրանը փորձի փակել Հորմուզի նեղուցը:
- Հորմուզի նեղուցով անցնում է հեղուկացված բնական գազի համաշխարհային մատակարարումների մինչև 30%-ը և նավթի ու նավթամթերքի համաշխարհային արտահանման մինչև 20%-ը:
- Ապրիլի 9-ից ի վեր նավթի գները բարձրացել են 40%-ով: Հիշե՛ք, որ էներգակիրների գների իջեցումը նախագահ Թրամփի հիմնական գործիքն է եղել գնաճը նվազեցնելու համար:

# Հետաքրքիր փաստեր

Ըստ KOBEISSI LETTER-ի՝ ԱՄՆ պարտատոմսերի շուկայի շուկայական արժեքը նվազել է մինչև ֆոնդային շուկայի արժեքի 68%-ը, ինչը 1970-ականներից ի վեր ամենացածր ցուցանիշն է:
Այս հարաբերակցությունը աստիճանաբար աճել է 14 տարվա ընթացքում, քանի որ բաժնետոմսերը զգալիորեն գերազանցել են պարտատոմսերին:
2020 թվականի սկզբից ի վեր ԱՄՆ բոլոր ցուցակված կորպորատիվ բաժնետոմսերի ընդհանուր շուկայական արժեքը կտրուկ աճել է 38 տրիլիոն դոլարով կամ 69%-ով:
Նույն ժամանակահատվածում պարտքային արժեթղթերի ընդհանուր արժեքը աճել է 17.8 տրիլիոն դոլարով կամ 40%-ով: ԱՄՆ ֆոնդային շուկան երբեք այսքան գերիշխող չի եղել:



Ընդհանուր առմամբ ԱՄՆ աշխատատեղերի թիվը նախորդ տարվա ընթացքում աճել է 1.1%-ով, ինչը ամենացածր տեմպն է 2021 թվականի մարտից ի վեր և ցածր է պատմական միջին 2%-ից: ԱՄՆ աշխատաշուկան շարունակում է թուլանալ, թեև աստիճանական տեմպերով:
Տվյալները CharlieBilello-ից:

# ԱՄՆ-ի տնտեսական օրացույց

Այս շաբաթվա ընթացքում 27 ընկերություններ պատրաստվում են հրապարակել իրենց 2024 թվականի չորրորդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները: Այս շաբաթ շուկայի մասնակիցների կողմից առավել սպասված են՝ Accenture-ի (CAN) և Kroger-ի (KR) հաշվետվությունները:

#1 / 27 Total  save as portfolio | create alert  Refresh: 3min | off  Page 1 / 2

| No. | Ticker | Company | Sector | Industry | Country | Market Cap | P/E | Price | Change | Volume |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ACN | Accenture plc | Technology | Information Technology Services | Ireland | 195.14B | 25.72 | 311.71 | -2.02% | 2,902,730 |
| 2 | KR | Kroger Co | Consumer Defensive | Grocery Stores | USA | 43.65B | 17.83 | 65.56 | 0.77% | 6,650,921 |
| 3 | LEN | Lennar Corp | Consumer Cyclical | Residential Construction | USA | 28.50B | 7.91 | 108.61 | -3.16% | 3,314,587 |
| 4 | DRI | Darden Restaurants, Inc | Consumer Cyclical | Restaurants | USA | 25.45B | 24.54 | 217.50 | -0.14% | 1,329,353 |
| 5 | JBL | Jabil Inc | Technology | Electronic Components | USA | 18.88B | 42.14 | 175.84 | -1.81% | 1,224,664 |
| 6 | KMX | Carmax Inc | Consumer Cyclical | Auto & Truck Dealerships | USA | 9.89B | 20.26 | 64.91 | -1.82% | 3,432,829 |
| 7 | KFY | Korn Ferry | Industrials | Staffing & Employment Services | USA | 3.44B | 14.31 | 66.59 | -3.24% | 396,797 |
| 8 | GMS | GMS Inc | Industrials | Building Products & Equipment | USA | 2.92B | 21.06 | 76.03 | -2.28% | 461,434 |
| 9 | RNW | ReNew Energy Global plc | Utilities | Utilities - Renewable | India | 2.46B | 99.85 | 6.79 | -0.15% | 629,396 |
| 10 | WLY | John Wiley & Sons Inc | Communication Services | Publishing | USA | 2.04B | 50.84 | 37.73 | -2.10% | 478,775 |
| 11 | LZB | La-Z-Boy Inc | Consumer Cyclical | Furnishings, Fixtures & Appliances | USA | 1.58B | 13.12 | 38.28 | -1.31% | 499,616 |
| 12 | TEN | Tsakos Energy Navigation Limited | Energy | Oil & Gas Midstream | Greece | 591.71M | 3.89 | 19.64 | 5.88% | 594,536 |
| 13 | AIOT | PowerFleet Inc | Technology | Software - Infrastructure | USA | 589.67M | - | 4.45 | -6.12% | 2,114,148 |
| 14 | APPS | Digital Turbine Inc | Technology | Software - Application | USA | 491.43M | - | 4.68 | -6.02% | 3,888,039 |
| 15 | SWBI | Smith & Wesson Brands Inc | Industrials | Aerospace & Defense | USA | 462.47M | 16.17 | 10.51 | -1.68% | 416,202 |
| 16 | ACB | Aurora Cannabis Inc | Healthcare | Drug Manufacturers - Specialty & Generic | Canada | 321.05M | 37.12 | 5.85 | -3.94% | 819,258 |
| 17 | ANTA | Antalpha Platform Holding Co | Financial | Credit Services | Singapore | 281.82M | 53.51 | 12.20 | -1.61% | 48,754 |
| 18 | HITI | High Tide Inc | Healthcare | Pharmaceutical Retailers | Canada | 184.54M | - | 2.28 | -2.15% | 251,367 |
| 19 | CODA | Coda Octopus Group Inc | Industrials | Aerospace & Defense | USA | 86.81M | 22.22 | 7.73 | 8.72% | 207,151 |
| 20 | LVO | LiveOne Inc | Communication Services | Entertainment | USA | 76.62M | - | 0.80 | -2.82% | 321,624 |

**Filters:** earningsdate:nextweek  export

# Այս շաբաթվա ԱՄՆ տնտեսական օրացույցը

| TIME (ET) | REPORT | PERIOD | ACTUAL | MEDIAN FORECAST | PREVIOUS |
|---|---|---|---|---|---|
| **MONDAY, JUNE 16** | | | | | |
| 8:30 am | Empire State manufacturing survey | June | | -6.0 | -9.2 |
| **TUESDAY, JUNE 17** | | | | | |
| 8:30 am | U.S. retail sales | May | | -0.6% | 0.1% |
| 8:30 am | Retail sales minus autos | May | | 0.2% | 0.1% |
| 8:30 am | Import price index | May | | -0.2% | 0.1% |
| 8:30 am | Import price index minus fuel | May | | -- | 0.4% |
| 9:15 am | Industrial production | May | | -0.1% | 0.0% |
| 9:15 am | Capacity utilization | May | | 77.7% | 77.7% |
| 10:00 am | Business inventories | April | | 0.0% | 0.1% |
| 10:00 am | Home builder confidence index | June | | 36 | 34 |
| **WEDNESDAY, JUNE 18** | | | | | |
| 8:30 am | Housing starts | May | | 1.37 million | 1.36 million |
| 8:30 am | Building permits | May | | 1.44 million | 1.41 million |
| 8:30 am | Initial jobless claims | June 14 | | 250,000 | 248,000 |
| 2:00 pm | FOMC interest-rate decision | | | | |
| 2:30 pm | Fed Chair Powell press conference | | | | |
| **THURSDAY, JUNE 19** | | | | | |
| | None scheduled, Juneteenth holiday | | | | |
| **FRIDAY, JUNE 20** | | | | | |
| 8:30 am | Philadelphia Fed manufacturing survey | June | | -1.0% | -4.0 |
| 10:00 am | U.S. leading economic indicators | May | | -0.1% | -1.0% |

060 408 005, 060 408 002, 010 592 301
Երևան, Բուզանդ 87, 85 գրասենյակ
brokerage@araratbank.am